

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ.Ա. ԲՐՈՒՅՅԱՆ

(ծննդյան 80-ամյակի առթիվ)



Գ. Ա. Բրուսյանը ծնվել է 1926 թ. Հայաստանի Սևաբ գյուղում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (1947 թ.), զուգահեռ հումանիտար կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանի երկու ֆակուլտետներում: Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի տրամաբանության ամբիոնի ասպիրանտուրան (1951 թ.): Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական թեզը, ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան: 1961 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1963 թ.՝ պրոֆեսորի կոչում: Ղեկավարել է Երևանի Բյուտովի անվան մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնը (1962-1970 թթ.), Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության

ամբիոնը (1970-1986 թթ.): 1971 թ. ընտրվել է ՀՄՄՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ ակադեմիկոս: 1977 թ. ընտրվել է ՀՄՄՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 1994-2002 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և ակադեմիայի փոխպրեզիդենտ. 2002 թ. մինչ օրս ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդականն է:

Գ. Բրուսյանը հեղինակել է ավելի քան 60 մենագրական հետազոտություններ, դասագրքեր, գրքույկներ և ավելի քան 200 հոդվածներ, որոնք թարգմանաբար հրատարակվել են աշխարհի ավելի քան 20 երկրներում: Առավել հատկանշական աշխատություններից են «Տրամաբանություն» (1957, 1967, 1976, 1987), «Իմացության գործընթացի դիալեկտիկական» (1959), «Ընդհանուր սեմանտիկայի իմացությունը» (1959), «Սեմանտիկական փիլիսոփայության քննադատական վերլուծությունը» (1962), «Լեզվական հարաբերակցության տեսության փիլիսոփայական էությունը» (1963), «Կյանքը և փիլիսոփայությունը» (1965), «Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն» (1968), «Փիլիսոփայություն և լեզու» (1972), «Լրացչության սկզբունքի մեթոդաբանական տեսանկյունները» (1974), «Փիլիսոփայական երկխոսություններ» (հ.1, 1975, 1985, հ. 2, 1981, 1986), «Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծագույն փիլիսոփա» (1982), «Դավիթ Անհաղթի տրամաբանությունը» (1982), «Փաստարկում» (1984), «Փաստարկման տեսության ակնարկ» (1992), «Տրամաբանության համառոտ դասընթաց» (1993), «Փոխակերպական տրամաբանություն» (1995), «Փաստարկման էությունը և կառուցվածքային տարրերը» (1997), «Տրամաբանությունը, լեզուն և փաստարկումը փիլիսոփայական գիտելիքի տեսանկյունից» (1998), «Հայագիտության առարկան և ուսումնասիրության մեթոդները» (1999), «Քաղաքական փաստարկման 101 կանոն» (համահեղինակ 2003) և այլն:

Գ. Բրուսյանը փիլիսոփայական գիտության բնագավառում սկզբնավորել է մի շարք գիտական դպրոցներ և ուղղություններ, որոնցից մեկը «փոխակերպական տրամաբանություն» է: Առաջադրել է աշխարհի լեզվական և հասկացության

կադապարների հիմնատիպ տարբերակ, առաջարկել և հիմնավորել է լեզվաբանական լրացչության սկզբունքը, որը համաշխարհային փիլիսոփայական և լեզվաբանական գրականության մեջ կոչվում է Գ. Բրուտյանի անունով:

Գ. Բրուտյանը հիմնադրել է Փաստարկման երևանյան դպրոցը, ստեղծել փաստարկման ընդհանրացնող տեսություն, մշակել փաստարկող դիսկուրսի կադապարը և բացահայտել փիլիսոփայական փաստարկման առանձնահատկությունը: Նրա հետազոտություններում հատուկ տեղ է գրավում իր հիմնադրած նոր ուղղությունը՝ թարգմանությունների տրամաբանությունը:

Գ. Բրուտյանը այն հեղինակներից է, որոնք զբաղվում են իմաստաբանական հիմնահարցերով: Հանրահայտ է Գ. Բրուտյանի նշանակալից դերը հայ փիլիսոփայության ու տրամաբանության մտքի պատմության մեջ: Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ նոր խոսք էր «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին» մենագրությունը: 1958 թվականից տասնամյակներ շարունակ նա մասնակցություն է ունեցել համաշխարհային, միջազգային փիլիսոփայական բազմաթիվ համաժողովների (Բտալիա, Մոսկվա, Մեքսիկա, Վիեննա, Փարիզ, Դյուսելդորֆ և այլն), արտասահմանյան համալսարաններում կարդացել դասախոսություններ (Մոսկվա, Բելգրադ, Լոնդոն, Սիդնեյ, Օքսֆորդ, Շեֆիլդ, Դելի, Հայդարաբադ, Բիջայաբադ, Գունտուր, Նիդադովո (Հնդկաստան), Ֆրեզնո, Բոստոն և այլն), տարբեր երկրներում կարդացել հրապարակային զեկուցումներ (Քենթ, Փիթսբուրգ, Լյուբլին, Մոֆիա, Վառնա և այլն):

1970 թվականից առ այսօր Գ. Բրուտյանն անդամակցում է միջազգային մի շարք կազմակերպությունների. «Փիլիսոփայություն և հոեոտություն» միջազգային հանդեսի (Փենսիլվանիա) խմբագրության անդամ է, Փաստարկման հետազոտությունների Եվրոպական կենտրոնի պատվավոր անդամ (Բրյուսել), «Հաղորդակցում և իմացություն» միջազգային ընկերության պատվավոր անդամ (Քենթ), «Հետազոտություններ փաստարկման մասին» միջազգային մատենաշարի գլխավոր խմբագիր (Բելգիա), Փաստարկման հետազոտությունների միջազգային ընկերության Խորհրդակցական վարչության անդամ (Ամստերդամ), «Ոչ ձևական տրամաբանության և քննադատական մտածողություն» միջազգային ընկերակցության պատվավոր փոխպրեզիդենտ (ԱՄՆ), Լոնդոնի Դիվանագիտական ակադեմիայի հիմնադիր անդամ (Մեծ Բրիտանիա), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պրեզիդենտ, Գիտությունների Սիցիլիական ակադեմիայի գիտական խորհրդատու, Գիտությունների համաշխարհային կենտրոն «Լեոնարդո դա Վինչի»-ի հոգեբանական-սոցիալական ազգային կենտրոնի փորձագետ՝ սոցիոլոգիայի գծով, և այլն:

Գ. Բրուտյանը մեծարվել և պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար», Բրատիսլավայի համալսարանի Կոմենսկու անվան, Վավիլովի անվան և այլ մեդալներով, Նոր Զելանդիայի Մեծ Մաստերտոնի պատվավոր քաղաքացի է, ստացել է Ամերիկյան կենսագրական ինստիտուտի, Կենսագրական միջազգային կենտրոնի (Քեմբրիջ) և այլ հաստատությունների Պատվո միջազգային վկայականներ:

Մեծարգո Գեորգ Աբելի, հայ իմաստասիրական միտքը հարասնում է շնորհիվ ստեղծագործող մտավորականների բազում սերունդների թողած ժառանգության, որի մեջ մեծ է Ձեր գիտական ներդրումը:

Խորագույնս ըմբռնելով Դավիթ Անհաղթի միտքը, որ փիլիսոփայությունը զարդն է մարդկային հոգու, Դուք գնում եք բարու իմացության ճանապարհով և կատարում բարին գիտական աշխարհում՝ գիտաստեղծագործական, փիլիսոփա-

յական նոր ուղղությունների հիմնադրման, գիտության կազմակերպման և երիտասարդ մասնագետների պատրաստման գործում կատարած ներհուն աշխատանքով:

Ձեր նշանավոր աշակերտներից լուսահոգի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը, որի մասին դուք հուշերի գիրք գրեցիք, այսօր կկիսեր մեր ուրախությունը Ձեր հորեյանի առթիվ:

Արևշատություն Ձեզ՝ որպես մարդու և ի գոհացումն այն ակնկալիքների, որ ունի իմաստասիրական միտքը Ձեր հետագա գիտական գործունեությունից:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

Պատմական գիտությունների դոկտոր,
Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի
հայկական բաժանմունքի՝ Հայոց փիլիսոփայական
ակադեմիայի թղթակից անդամ

Խմբագրության կողմից

Խմբագրական խորհրդի հետ ի սրտե շնորհավորում ենք ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, հայ փիլիսոփայական գիտության կարկառուն ներկայացուցիչ Գեորգ Աբելի Բրուսյանին իր հորեյանի առթիվ և մաղթում քաջառողջություն և կորով իր գիտական մտահղացումներն իրականացնելու ճանապարհին: